


Թաւած մատուռ մը , ու վերջինը՝ դարձեալ Ղարտի տաճարի մը կողքէն փրցուած թեւ մը , երկուքն ալ , իրենց օտարախառն նկարագրովը , ալ չէին կրնար հանդուրժելի ըլլալ Մէհմէտ Ալիի բարեբաասիկ թուականէն անմիջապէս վերջը կազմուած հայ գաղութին , որ թիւով և ոգով միանգամայն օր ըստ օրէ աւելի առաւելակշիռ , սպազայի ձգտումներովը մանաւանդ , ազգային ինքնութեան և զարգացման նոր հորիզոնի մը կ'նայէր :



(Բիւ 16)

Հոգեհուն-Հիւանդանոց

Այդ միջոցին Առաջնորդն էր Կիրակոս Եպիսկոպոս Երուսաղէմացի (1825 — 1835) , առաքինի և կրթուած եկեղեցական մը , որ գիտցած էր ուղղութիւն տալ գաղութին Կ. Պոլսեցիներէ՝ Զմիւռնիացիներէ՝ Ակնցիներէ և Վանեցիներէ բաղկացած այս առաջին խաւին անգամներու փափաքներուն և եռանդին , և , իր ընտրութենէն երեք տարի վերջը , 1828-ին , Ս . Սարգսի մօտակայքը , այժմեան եկեղեցիին արեւելակողմի բակին մէջ կազմել հայկական օճախ մը , շինութեամբը Դըպ-